

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԿԱՊԱՆԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

19.08.2023



Սիրելի՛ կապանցիներ

Շնորհավորում եմ բոլորիս այսօր նշվող Կապանի օրվա կապակցությամբ:

Մյուսնյաց մարզկենտրոնին խաղաղ երկինք, շարունակական զարգացում ու հարատև ամրություն եմ մաղթում:

Բազմադարյա պատմությունը, հանձին Կապանի, մեզ է փոխանցել հերոսական, հարուստ կենսագրությամբ, տարբեր ոլորտներում խոստումնալից ու ակտիվ կյանքով քաղաք, որն այսօրվա իր տեսքն է ստացել բազում սերունդների քրտնաջան աշխատանքով:

Ցանկանում եմ, որ միշտ յուրաքանչյուրիդ հետ լինի հայրենի քաղաքն ավելի լավը դարձնելու համար առավելագույնը անելու ցանկությունը:

Շնորհակալություն նրանց, ովքեր իրենց ձիրքով, աշխատանքով և ուժով անգնահատելի ներդրում ունեն մեր սիրելի Կապանի բարօրության գործում:

Խոնարհումս նրանց, ովքեր կյանք են գոհել նրա սահմանները պաշտպանելու համար և նրանց, ովքեր այսօր էլ պաշտպանում են սահմանային Կապանը:

Այս բարդ, պատասխանատու ու դժվարին ժամանակաշրջանում նաև հայրենի քաղաքի հանդեպ սերն արտահայտելու տարբեր դրսևորումներով ու մշակույթով է կապանցին աշխարհին ցույց տալիս, որ իր քաղաքում ապրելու և ստեղծագործելու կամքն անսասան է:

Շնորհավո՛ր տոնդ, Կապա՛ն: